

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2000թ. հունվար-օգոստոսին, փաստացի գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի տվյալներով, կազմել է 150,0 մլրդ. դրամ, որը 1999թ. մակարդակը գերազանցել է 1,2 տոկոսով, 2000թ. օգոստոս ամսվա համախառն արտադրանքը կազմել է հուլիս ամսվա 97,6 տոկոսը (համադրելի գներով): Գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ անասնապահության համախառն արտադրանքի աճով, որը 1999թ. մակարդակը գերազանցել է 3,9%-ով, իսկ բուսաբուծության համախառն արտադրանքը զիջում է 1999թ. մակարդակը 1,8 տոկոսով: Բուսաբուծության համախառն արտադրանքի նվազումը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ բացատրվում է տևական երաշտով, որի հետևանքով նախորդ տարվա համեմատությամբ զգալի պակասել են հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքը, որը կազմում է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 77,5%-ը, բոստանային մշակաբույսերինը՝ 67,5%-ը և կերային մշակաբույսերինը՝ 83,2 տոկոսը:

Գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված «Բերքահավաքի և կերերի կուտակման ընթացքի մասին» վիճակագրական հաշվետվությունների տվյալներով, 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, հանրապետությունում հնձվել է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների 82,0%-ը (150644 հեկտար), ստացվել է 188930 տոննա համախառն բերք, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 243817 տոննայի դիմաց: Մեկ հեկտարից միջին բերքատվությունը կազմել է 12,5 ցենտներ, նախորդ տարվա 17,6 ցենտների դիմաց:

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքահավաքի ընթացքը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ

(տոննա)

Մարզերի անվանումը	Հացահատիկ		Կարտոֆիլ		Բանջարեղեն		Բոստան		Պտուղ	
	արտադրվել է 1.09. 2000թ. դրությամբ	1.09. 2000թ. %-ով 1.09. 1999թ. նկատմամբ	արտադրվել է 1.09. 2000թ. դրությամբ	1.09. 2000թ. %-ով 1.09. 1999թ. նկատմամբ	արտադրվել է 1.09. 2000թ. դրությամբ	1.09. 2000թ. %-ով 1.09. 1999թ. նկատմամբ	արտադրվել է 1.09. 2000թ. դրությամբ	1.09. 2000թ. %-ով 1.09. 1999թ. նկատմամբ	արտադրվել է 1.09. 2000թ. դրությամբ	1.09. 2000թ. %-ով 1.09. 1999թ. նկատմամբ
Արագածոտն	9574	51,6	12600	164,7	10500	73,2	83	54,2	7000	114,0
Արարատ	39445	94,0	18190	109,6	63807	133,8	7116	148,1	20859	282,6
Արմավիր	62478	97,5	28789	138,5	120000	117,4	24508	58,2	28000	178,0
Գեղարքունիք	11708	70,2	127	9,3	839	194,2	-	-	-	-
Լոռի	10716	92,4	10250	145,1	600	180,7	3	100,0	536	101,7
Կոտայք	8444	65,8	253	70,9	1044	85,2	-	-	836	79,5
Շիրակ	22240	37,5	88	26,3	1071	81,4	-	-	2	100,0
Սյունիք	17082	143,8	2935	294,7	1207	201,8	-	-	1088	413,7
Վայոց Ձոր	2132	83,0	455	33,2	2501	54,9	120	60,3	2300	65,5
Տավուշ	3811	118,1	2350	43,0	554	58,3	54	450,0	528	204,7
ք.Երևան	1300	110,8	2024	115,7	5540	89,3	50	71,4	2550	597,2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐ	188930	77,5	78061	122,5	207663	115,5	31934	67,5	63699	180,5

Բերված տվյալներից երևում է, որ 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է կարտոֆիլի, բանջարանոցային մշակաբույսերի և պտղի համախառն բերքը: Կարտոֆիլի համախառն բերքի ավելացումը պայմանավորված է 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ կարտոֆիլի քանդված (բերքահավաք կատարված) տարածությունների ավելացմամբ մոտ 1500 հեկտարով կամ

1. ԻՐԱՎԱՆ ԳՍՏՎԱԾ

21,7%-ով: Ընթացիկ տարում, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է նաև կարտոֆիլի ցանքատարածությունները՝ 3204 հեկտար կամ 10,2%-ով: Բանջարեղենի համախառն բերքի ավելացումը պայմանավորված է հունիս-օգոստոսին օդի բարձր ջերմաստիճանային ռեժիմով, ինչը հանգեցրել է վաղաժամկետ հասունացման, իսկ պտղի համախառն բերքի ավելացումը կապված է 1999թ. ծիրանենու վաղ զարնանային ցրտահարությունների հետ:

Հանրապետությունում սկսվել է աշնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները: 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ցանվել է 608 հեկտար աշնանացան մշակաբույսեր, որը կազմում է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 34.6%-ը, նման իրավիճակը պայմանավորված է աշնանացան մշակաբույսերի սերմացուի զգալի պակասով:

Վերամշակող կազմակերպությունների կողմից 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ (ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների) գնվել է 21165 տոննա բանջարեղեն (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 26807 տոննայի դիմաց), որը զիջում է նախորդ տարվա մակարդակին 21,1 տոկոսով:

Բանջարեղենի գնումների մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում լուլիկը՝ 99,9%, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ մնացել է անփոփոխ: Գնվել է նաև 8105 տոննա պտուղ (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի 1047 տոննայի դիմաց), որը գերազանցում է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանը 7,7 անգամ: Գնված պտղի ընդհանուր ծավալի մեջ, ընթացիկ տարում, մեծ տեսակարար կշիռ են կազմել ծիրանի գնումները, որը կազմել է գնված ամբողջ պտղի 76,4 տոկոսը:

Անասնապահական մթերքների արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ

Մարզերի անվանումը	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով), հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ	2000թ.	2000թ. %-ով 1999թ. նկատմամբ
Արագածոտն	5,3	103,9	43,6	102,3	19,3	114,2
Արարատ	3,2	106,7	24,7	101,6	19,5	113,4
Արմավիր	3,2	103,2	24,8	102,1	31,0	114,4
Գեղարքունիք	7,5	105,6	61,8	102,0	14,5	109,0
Լոռի	5,4	105,9	43,4	101,9	12,1	110,0
Կոտայք	4,1	105,1	33,6	102,8	70,7	118,2
Շիրակ	6,0	105,3	48,7	101,7	23,4	108,3
Սյունիք	4,0	102,6	31,8	102,6	16,3	107,9
Վայոց Ձոր	2,3	104,5	17,2	101,8	15,5	109,9
Տավուշ	3,8	102,7	27,1	101,1	16,8	109,8
ք. Երևան	0,4	133,3	2,5	100,0	23,9	116,6
Ընդամենը ՀՀ	45,2	104,9	359,2	102,0	263,0	113,5

Բերված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2000թ. հունվար-օգոստոսին իրացվել է 45,2 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, որը գերազանցել է 1999թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշը 2,1 հազ. տոննայով կամ 4,9%-ով, կաթի արտադրությունը նույնպես գերազանցում է 1999թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 7,1 հազ. տոննայով կամ 2,0%-ով, իսկ ձվինը՝ 31,3 մլն. հատով կամ 13,5%-ով:

Հարկ է նշել, որ 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ մսի իրացված ծավալների աճը հիմնականում պայմանավորված է անասնակերի պակասով (երաշտի հետևանքով), ինչի պատճառով ավելացել է անասնազխաքանակի սպանդը (մորթը):